ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» մարտի 2024թ. № 322

ԱՐԾՐՈՒՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 13-Ա որոշումը և Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 169-Ա որոշումը, 2024 թվականի մարտի 25-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով վաճառելու մասին» թիվ 2/1-1 արձանագրությունը, հաշվի առնելով, որ 06-006-0570-0017 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,89734 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողամասերի ցանկի մեջ՝ ***որոշում եմ.***

1. «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, Սպիտակ ք., Երևանյան խճուղի, 71 հողամաս» հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-006-0570-0017 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,89734 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 10 956 521,40 (տաս միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր քսանմեկ ամբողջ քառասուն հարյուրերորդական) ՀՀ դրամով, բնակելի տուն կառուցելու նպատակով, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արծրուն Վոլոդյայի Սողոմոնյանին (ծնված՝ 27.03.1981թ.):

2. Արծրուն Վոլոդյայի Սողոմոնյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում, աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ.մարտի 26
ք.Սպիտակ